ԵՐԵՎԱՆԻ
ԿԵՆԴԱՆԱԲԱՆԱԿԱՆ
ԱՅԳԻ

ԵԿ-044-2022
12.08.2022թ.

«ՆՈԲԻԼԻՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ
պարոն՝ Գ. ԱԲԳԱՐՅԱՆԻՆ
(Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Աջափնյակ, Նորաշեն թղմ., 24շ, 138)

Հարգելի՛ պարոն Աբգարյան

Հայտնում ենք, որ «Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ի և «Նոբիլիս Գրուպ» ՍՊԸ-ի միջև 2022թ-ի հուլիսի 8-ին կնքված N ԵՔԿԱ-ՀՄԱՊՁԲ-22/07-6 ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակում «Նոբիլիս Գրուպ» ՍՊԸ-ն պարտավորվել է մատակարարել «Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ի կարիքների համար անհրաժեշտ մսեղիք, սակայն Պայմանագրով ստանձնված պարտավորությունները «Նոբիլիս Գրուպ» ՍՊԸ-ի կողմից սահմանված կարգով և պատշաճ չեն իրականացվել: Մասնավորապես՝ «Նոբիլիս գրուպ» ՍՊԸ-ին պարբերաբար ուղարկվել են պայմանագրի 1-ին չափաբաժնի մասով գնման առարկա հանդիսացող խոշոր եղջերավոր կենդանու մսի մատակարարման հայտեր, մասնավորապես՝

1. 08.07.2022թ. ուղարկվել է պատվեր-հայտ՝ մատակարարման ենթակա քանակ 900 կգ, որը չի մատակարարվել;

2. 15.07.2022թ. ուղարկվել է պատվեր-հայտ՝ մատակարարման ենթակա քանակ 900 կգ, պայմանով՝ մատակարարումներն իրականացնել մեկ շաբաթվա ընթացքում 400 և 500 կգ ծավալներով: 18.07.2022թ. մատակարարվել է 517 կգ, որից 47 կգ հետ է վերադարձվել՝ Պայմանագրով սահմանված տեխնիկական բնութագրին չհամապատասխանելու պատճառով: 21.07.2022թ-ին մատակարարվել է ընդամենը 200 կգ, սակայն մատակարարված գնման առարկան չի համապատասխանել Պայմանագրում նշված պահանջներին, կազմվել է համապատասխան ակտ և մատակարարված ապրանքը չի ընդունվել պահեստ: Մսի տարբեր հատվածներից կատարվել են նմուշառումներ և ուղարկվել փորձաքննության: Ըստ մանրադիտակային

ՀՀ, Երևան 0025,
Մյասնիկյան 20
+374 10 562 362
www.zoo.am
info@zoo.am

հետազոտությամբ նմուշներում հայտնաբերվել են անաերոբային ինֆեկցիաներին բնորոշ մանրէներ:

3. 22.07.2022թ. ուղարկվել է պատվեր-հայտ՝ մատակարարման ենթակա քանակ 900 կգ, որը չի մատակարարվել:

4. 01.08.2022թ. ուղարկվել է պատվեր-հայտ՝ մատակարարման ենթակա քանակ 900 կգ, պայմանով՝ նշյալ քանակությունը բաշխել շաբաթվա օրերի՝ օրական կազմելով 180 կգ: Նշյալ ձևաչափով սահմանված քանակությունից 05.08.2022թ. մատակարարվել է ընդամենը 130 կգ միս, որը չի համապատասխանել Պայմանագրով սահմանված տեխնիկական բնութագրին, մասնավորապես՝ միսը եղել է քառատված, այնինչ պայմանագիրը նախատեսում է խեկ-ի ամբողջական մարմին, բացակայել է մակնշումը, սահմանված՝ «Սննդամթերքի անվտանգության» մասին ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի, ինչպես նաև՝ ՍԱՏՄ կողմից տրամադրվող նմուշառման ու փորձաքննության 5-րդ ձև փաստաթուղթը, սահմանված՝ ՀՀ Կառավարության 2006թ-ի օգոստոսի 31-ի թիվ 1081–Ն, ՀՀ Կառավարության 2004թ-ի մարտի 31-ի թիվ 426-Ն, ՀՀ Կառավարության 2013թ. հոկտեմբերի 9-ի թիվ 68 որոշմամբ հաստատված «Մսի և մսամթերքի տեխնիկական կանոնակարգ»-ին: Հաշվի առնելով վերոգրյալը նշյալ ապրանքը չի ընդունվել պահեստ և կազմվել է համապատասխան արձանագրություն:

Հաշվի առնելով, վերոգրյալը և հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.3 կետով սահմանված պահանջները՝ «Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ի կողմից N ԵՔԿԱ-ՀՄԱՊՁԲ-22/07-6 ծածկագրով գնման պայմանագիրը միակողմանիորեն մասնակի (առաջին չափաբաժնի մասով) լուծվել է:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջներով, առաջարկում ենք մինչև ս.թ. օգոստոսի 19-ը ներառյալ ապահովել Պայմանագրի շրջանակում Պայմանագրի առաջին չափաբաժնի մասով «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի կողմից թողարկված N E22-000618 բանկային երաշխիքով չմատակարարված քանակի նկատմամբ որակավորման ապահովման գումարի՝ 13,320,000.00 (տասներեք միլիոն երեք հարյուր քսան հազար) ՀՀ դրամի չափով, և N E22-000620 բանկային երաշխիքով չմատակարարված քանակի նկատմամբ պայմանագրի կատարման ապահովման գումարի՝ 4,440,000.00 (չորս միլիոն չորս հարյուր քառասուն հազար) ՀՀ դրամի չափով վճարների գանձումը:

Միաժամանակ, տեղեկացնում ենք, որ վերոնշյալի վերաբերյալ «Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ը դիմել է Ձեզ սպասարկող՝ «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ-ին՝ երաշխիքով ստանձնված պարտավորությունների կատարման համար:

ՏՆՕՐԵՆԻ Ժ/Պ՝ **Է. ՂԱԶԱՐՅԱՆ**

Կատարող՝ Հ. Գուլաբյան
+37493074480